

ԸՍՏ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ` ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն պահանջներով սահմանվում են ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության (սույն պահանջների իմաստով այսուհետ` կառավարում) պահանջներն ու դրանց առանձնահատկությունները` ըստ դասակարգման չափորոշիչների:

II. ԸՍՏ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ` ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

2. Բոլոր գետերի կառավարումն ընթանում է էկոլոգիական թողքի անքակտելիության սկզբունքով:

3. Ըստ նշանակության ջրային ռեսուրսները կառավարվում են`

1) միջազգային նշանակության դասակարգում ունեցող ջրային ռեսուրսների կառավարումը պետք է ապահովի միջպետական սահմանի վրա և գետի ամբողջ երկայնքով որակի և քանակի ընդունված նորմերի պահպանումը, ջրային և շրջակա ցամաքային կենսաբազմազանության բնականոն զարգացումը, Հայաստանի Հանրապետության կարմիր գրքում ընդգրկված բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների պահպանումը, ինչպես նաև ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիների որակական կազմը.

2) հանրապետական նշանակության դասակարգում ունեցող ջրային ռեսուրսների կառավարումը պետք է ապահովի միջհամայնքային սահմանի վրա և գետի ամբողջ երկայնքով որակի և քանակի ընդունված նորմերի պահպանումը, կենսաբազ-

մագանության բնականոն զարգացումը, Հայաստանի Հանրապետության կարմիր գրքում ընդգրկված բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների պահպանումը, ինչպես նաև ջրակեղևամակարգերի պահպանման գոտիների որակական կազմը.

3) տեղական նշանակության դասակարգում ունեցող ջրային ռեսուրսների կառավարումը պետք է ապահովի գետի ամբողջ երկայնքով որակի և քանակի ընդունված նորմերը, կենսաբազմազանության բնականոն զարգացումը, Հայաստանի Հանրապետության կարմիր գրքում ընդգրկված բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների պահպանումը, ինչպես նաև ջրակեղևամակարգերի պահպանման գոտիների որակական կազմը:

4. Հիմք ընդունելով ջրավազանային կառավարման պլանները՝ միջազգային և հանրապետական նշանակության ջրային ռեսուրսների կառավարումն իրականացնում է ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինը, իսկ տեղական նշանակության ջրային ռեսուրսներինը՝ վերջինիս համակարգմամբ՝ ջրավազանային կառավարման մարմինները (այսուհետ՝ մարմին):

5. Ըստ սնման աղբյուրների՝ գետերը բաժանվում են հետևյալ բնորոշ խմբերի՝

- 1) գետեր՝ գերազանցապես հալոցքային սնումով.
- 2) գետեր՝ հալոցք-անձրևային սնումով.
- 3) գետեր՝ գերազանցապես հալոցքի և ստորերկրյա սնումով.
- 4) գետեր՝ գերազանցապես ստորերկրյա սնումով.
- 5) գետեր՝ միաժամանակ անձրևային, հալոցքային և ստորերկրյա սնումով:

6. Ըստ սնման աղբյուրների՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 23 - Ն որոշման հավելվածի 5-րդ կետի խմբերն աստիճանավորվում են՝

1) որևէ սնման աղբյուրի 80 տոկոսից ավելի բաժին ունենալու դեպքում գետը կոչվում է հալոցքային, անձրևային կամ ստորերկրյա սնումով գետ.

2) որևէ սնման աղբյուրի 50-80 տոկոս բաժին ունենալու դեպքում գետը համապատասխանաբար կոչվում է առավելապես հալոցքային, առավելապես անձրևային կամ առավելապես ստորերկրյա սնում ունեցող գետ.

3) նշված աղբյուրներից որևէ մեկի 50 տոկոսից պակաս բաժին ունենալու դեպքում գետը պատկանում է խառը սնման դասին:

7. Հալոցքային սնում ունեցող գետի կառավարումը համապատասխան մարմնի կողմից պետք է ապահովի տարեկան ջրառի հիմնական մասնաբաժինը (50 տոկոսից ոչ պակաս)՝ գարնանային վարարման ամիսներին:

8. Անձրևային սնում ունեցող գետի կառավարումը համապատասխան մարմնի կողմից պետք է պլանավորվի տարեկան կտրվածքով՝ հիմք ընդունելով տվյալ հատվածի տեղումների, գետի հոսքի միջին բազմատարյան հետազոտությունները: Ջրառի տարեկան հիմնական մասնաբաժինը (50 տոկոսից ոչ պակաս) պետք է ընկնի անձրևային տեղումների սեզոնին:

9. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 23 - Ն որոշման հավելվածի 7-րդ և 8-րդ կետերում նշված դեպքերում պահպանությունն իրականացվում է՝ հաշվի առնելով հալոցքաջրերի և անձրևաջրերի բնական աղտոտվածությունն ու պղտորությունը:

10. Ստորերկրյա սնում ունեցող գետը համապատասխան մարմնի կողմից կառավարվում է՝ հիմք ընդունելով հոսքի միջին բազմատարյան հետազոտությունները:

11. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 23 - Ն որոշման հավելվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետում նշված սնում ունեցող գետերը համապատասխան մարմնի կողմից պետք է կառավարվեն՝

1) առավելապես հալոցքային սնում ունեցող գետի կամ դրա որևէ հատվածի տարեկան ջրառի 40-50 տոկոս մասնաբաժինն ապահովելով գարնանային վարարման ամիսներին.

2) առավելապես անձրևային սնում ունեցող գետի կամ դրա որևէ հատվածի տարեկան ջրառի 40-50 տոկոս մասնաբաժինն ապահովելով անձրևային տեղումների սեզոններին:

12. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 23 - Ն որոշման հավելվածի 6-րդ կետի 3-րդ ենթակետում նշված՝ սնում ունեցող գետերը համապատասխան մարմնի կողմից կառավարվում են՝ հիմնվելով տվյալ հատվածի տեղումների և գետի հոսքի միջին բազմատարյան հետազոտությունների վրա:

Պահպանությունն իրականացվում է՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 23 - Ն որոշման հավելվածի 9-րդ կետում նշված դրույթները:

13. Գետերի կառավարումը համապատասխան մարմնի կողմից իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 23 - Ն որոշման հավելվածի 7-րդ, 8-րդ և 11-րդ կետերում նշվող ձևերով, եթե բացակայում են դրանց միջին բազմատարյան հետազոտությունները կամ հետազոտությունների տվյալների բազան 30 տարվանից պակաս է: Եթե տվյալ հատվածի տեղումների և գետի հոսքի միջին բազմատարյան հետազոտությունների տվյալների բազան 30 տարվանից ավելին է, ապա այդ կետերով բնութագրվող գետերի կառավարումը կարող է պլանավորվել տարեկան կտրվածքով՝ ելնելով տվյալ գետի հիդրոաշխարհագրական առանձնահատկություններից:

14. Հայաստանի Հանրապետության գետերն ըստ երկարության դասակարգվում են՝

1) մանր՝ երկարությունը մինչև 10 կմ.

- 2) փոքր՝ երկարությունը 10-49 կմ.
- 3) միջին՝ երկարությունը 50-99 կմ.
- 4) մեծ՝ երկարությունը 100 կմ և ավելի:

15. Ըստ երկարության դասակարգվող գետերը կառավարվում են՝ հաշվի առնելով դրանց ինքնամաքման ունակությունը: Գետի որակն այլ ջրային ռեսուրս թափման պահին պետք է համապատասխանի իր բնական ֆոնային արժեքին:

16. Հայաստանի Հանրապետության լճերն ըստ ծավալի դասակարգվում են՝

- 1) մեծ՝ 5 միլիոն մ³ և ավելի.
- 2) փոքր՝ 1-5 միլիոն մ³.
- 3) լճակներ՝ մինչև 1 միլիոն մ³ ծավալով:

17. Ըստ ծավալի լճերը համապատասխան մարմնի կողմից պետք է կառավարվեն՝ հիմք ընդունելով դրանց մեջ հիպոլիմնիոնի՝ լճի ստորին ջրաշերտ, որն ունի ամենամեծ խտությունը, հաստությունը (եթե այն առկա է լճում): Հիպոլիմնիոնի հաստությունը պետք է համեմատելի լինի ծավալի հետ:

18. Ըստ ջրայնության աստիճանի դասակարգվող գետերի կառավարումը համապատասխան մարմնի կողմից իրականացվում է՝ հաշվի առնելով գետի հոսքի միջին բազմատարյան տվյալները, ջրակոհամակարգերի պահպանման գոտիների պահանջների ապահովման պայմանները, կենսաբազմազանության էնդեմիկ տեսակների որակական և քանակական չափանիշները:

19. Ըստ հոսքի տարեկան բաշխման դասակարգվող գետերի կառավարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 23 - Ն որոշման հավելվածի 7-11-րդ կետերում նշված՝ սնման աղբյուրների դասակարգման սկզբունքներով և հաշվի առնելով նաև Հայաստանի Հանրապե-

տության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 23 - Ն որոշման հավելվածի 12-րդ կետում նշված մոտեցումները:

20. Ըստ օգտագործման նշանակության դասակարգվող ջրային ռեսուրսների կառավարումն իրականացվում է՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգիրքն ու «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը և ելնելով այն ջրի որակի նորմերից, որոնց դասվում է տվյալ ջրային ռեսուրսը:

21. Ըստ որակի դասակարգվող ջրային ռեսուրսների կառավարումն իրականացվում է այնպես, որպեսզի ապահովվի տվյալ ջրային ռեսուրսի «բարձր» և «լավ» որակին համապատասխանող դասակարգումը: Եթե ջրային ռեսուրսը չի համապատասխանում «բարձր» և «լավ» որակին համապատասխանող դասակարգմանը, ապա դրան հասնելու համար մշակվում են համապատասխան ծրագրեր, որոնք պետք է ապահովեն ջրային ռեսուրսների համապատասխանելիությունն այդ դասակարգմանը:

III. ԸՍՏ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ` ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

22. Ստորերկրյա ջրային ռեսուրսների կառավարումն իրականացվում է՝ հիմք ընդունելով ջրային պետական կադաստրի տվյալները:

IV. ԸՍՏ ԲՆԱԿԱՆ ՀԱՆՔԱՅՆԱՅՄԱՆ` ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

23. Ըստ բնական հանքայնացման դասակարգվող ջրային ռեսուրսների կառավարումն իրականացվում է՝ հաշվի առնելով դրանց առողջապահական և ռեկրեացիոն արժեքը, օգտագործման նպատակը և հիդրոտեխնիկական կառուցվածքների առանձնահատկությունները:

Վ. ԸՍՏ ԲՆԱԿԱՆ ԿԱԶՄԻ՝ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

24. Ըստ բնական կազմի դասակարգվող ջրային ռեսուրսների կառավարումն իրականացվում է՝ հաշվի առնելով դրանց առողջապահական և ռեկրեացիոն արժեքը, օգտագործման նպատակը և հիդրոտեխնիկական կառուցվածքների առանձնահատկությունները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ